մեծութեամբ, բուն խորաններից չափուած, 8 բ-ի լիւնետի մէջ «Կանոն Ա. յորս ըստ նոսին ածան չորեքին. ածան Մաթէոս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս», իսկ 9 ա. «Կանոն բ։ յորս երեքն Մաթէոս, Մարկոս, Ղուկաս» գրուած։ Առաջին խորանը հաստատուած է երեք սեան վրայ, խարիսխների տակ մի գերանաձեւ՝ զարդարուած երկարաձիգ օղակների շղթայով. խարիսխի յատակն աւելի լայն է, տափակ եւ իրար վերայ դրուած պլիտաներով, ներքեւից վեր հետզհետէ նեղանալով. վերջին օղակաձեւ պլիտայի վերայ բարձրանում է սեան մից բարակ եւ հանգուցաւոր գծով, իսկ միջին տարածութիւնը ծածկուած է զոյգ պարանների հիւսուածքով, պտոյտների մէջ մի մի կարմիր գնդակով։ Մէջ տեղի սեան գլխին լիւնետն է երեքքառորդական կամարի տակ. կամարի ճակատը զարդարուած եռատերեւի եւ հնգատերեւի իրար յաջորդող շարքով։

Բուն խորանը քառանկիւնի է, որի ներքեւի շրջանակը սիւների վերայ ընկած գերանն է, իսկ երեք կողքերից կապոյտ ֆոնի վերայ արմաւենիկի եռաճիւղերով զարդեր։ Քառանկիւնու անկիւններում



(պատկեր 1)

բունը, ոչ բոլորակ, այլ տափակ երեսով, ուրեմն քառանկիւնի, միջին մասում հիւսկէն զարդով։ Խոյակի յատակը դարձեալ տափակ է, իսկ բուն զարդը իրար կպած երկու նշատերև, ծայրերը հակառակ ուղղութեամբ, որոնց վերայ դրուած է երկրորդ պլիտան իբրև հիմք սիւների վերայ ձգուած գերանի։ Միջին սեան բուն խոյակը գնդակաձև է, երկու պլիտայի մէջ, իսկ խարիսխն էլ իւր վերին մասում օղակով չէ փակուում, այլ բունը խրուած է պարզ և տափակ պլիտայի մէջ։ Սիւների գլխին ձգուած է գերանը, եզերուած երկու կողներսից՝ մի մի վէյերաձև զարդ կայ, մէկն էլ ճակատում, որտեղից երկու ճառագայթաշերտեր ուղղուած են դէպի ներքեւի անկիւնները, եզերուած կապոյտ գծերով, իսկ նրանց միջի տարածութիւնը ոսկի ֆոնի վերայ պարանահիւսի ոլորապտոյտով զարդարուած։ Նման մի մի ճառագայթ էլ վերևի անկիւններից ուղղուած են դէպի լիւնետը։ Ճակատի զարդը քառանկիւնից դուրս մի հնգատերև է, երեք կարմիր գնդակներով, առնուած բոլորակի մէջ, իսկ չուրջը արմաւենիկի կանաչ տերևներով զարդարուած։ Վերին անկիւնների զարդերն էլ,